

Առաջացած հարցերի պարզաբանում

1. Հարց Մսոյի դեմ խմոցի համար - հողի նիշերի տարբերությունը կասկածելի է ...ջրատարից միացման կետի -2085մ, խմոցի - 1750մ...

պատասխան Մսոյի դեմ խմոցի համար - պետք է լինի՝ ... աշխարհագրական բարձրություններն են՝ ջրատարից միացման կետի -**2085մ**, խմոցի - **2075մ**:

1. Խմոց /Մսոյի դեմ/, գտնվում է ջրատարից 30մ հեռավորության վրա /ջուրը վերցվում Փ219մմ ջրատարից/, աշխարհագրական բարձրություններն են՝ ջրատարից միացման կետի -**2085մ**, խմոցի - **2075մ /վրիպում է եղել/**: Խմոցի հաշվարկային ծավալը՝ 12մ Փ600մմ կիսախողովակ, մոտեցնող ջրագծի տրամագիծը՝ Փ50մմ:

2. Հարց Դեղին աղբյուր խմոցի համար - Դեղին աղբյուրի բարձրությունն է 2235մ, խմոցի բարձրությունը՝ 2260մ: Ստացվում է ջուրը պե՞տք է մղվի աղբյուրից 25մ վեր:

Պատասխան Դեղին աղբյուր խմոցի համար - պետք է խմոցի և աղբյուրի նիշերի տեղերը փոխել ... աշխարհագրական բարձրություններն են՝ աղբյուրի - **2260մ**, խմոցի - **2235մ**:

2. Խմոց /Դեղին աղբյուր/, գտնվում է աղբյուրից 230մ հեռավորության վրա, աշխարհագրական բարձրություններն են՝ աղբյուրի - **2260մ**, խմոցի - **2235մ /աղբյուրի և խմոցի նիշերը փոխել/**: Խմոցի հաշվարկային ծավալը՝ 2 հատ 12մ Փ600մմ կիսախողովակ, ճյուղավորումով միացած իրար, մոտեցնող ջրագծի տրամագիծը՝ Փ50մմ:

3. Հարց Մարի աղբյուր խմոցի համար - խմոցը գտնվում է ջրատարի նիշից 90մ վեր: Նախատեսել պո՞մպ, էլեկտրասնուցո՞ւմ:

Պատասխան Մարի աղբյուր խմոցի համար - այստեղ ամեն ինչ ճիշտ է, քանի որ ջրատարը անցնում է 2630մ նիշից ավելի բարձր վայրերով, կա բավարար ճնշում:

3. Խմոց /Մարի աղբյուր/, գտնվում է ջրատարից 450մ հեռավորության վրա /ջուրը վերցվում է Փ100մմ ջրատարից/, աշխարհագրական բարձրություններն են՝ ջրատարից միացման կետի - 2540մ, խմոցի - 2630մ: Խմոցի հաշվարկային ծավալը՝ 2 հատ 12մ Փ600մմ կիսախողովակ, ճյուղավորումով միացած իրար, մոտեցնող ջրագծի տրամագիծը՝ Փ50մմ: